ւարիոյ, և միւսն՝ տունն Գօրտնդանիոյ. զոր երկոքին մարտեալ 'ի վերայ իշխանութեան՝ յաղթեաց Լուտովիկ, և կալեալ զտունն Գօրտնդանիոյն՝ եդ 'ի բանտի. և անդ մեռաւ: Իսկ Պապն ոչ ետ նմա թագ: Իսկ իբրև ընդդիմացաւ Պապին, նզովեալ բանադրեցաւ 'ի նմանէ: Իսկ Լուտովիկն՝ հակառակ Պապին՝ զոմն պապացոյց, և 'ի նմանէ թագեցաւ. և ԺԻ. ամ զեկեղեցին հալածեաց: Իսկ դարձեալ 'ի Աւէնց պապէն նզովեցաւ, և հրամանաւ նորա ընտրեցաւ 'ի կայսրութիւնն Գարոլոս կոչեցեալն չորրորդ:

Գարոլոս չորրորդ սկսաւ յամի Տեառն ՌՅԽԶ. ընտրեալ եղև 'ի կայսրութիւն, և կալաւ զամս ԼԲ: Սա ընտրեալ եղև 'ի կենդանութեան Լուտովիկ Պաւարին հակառակ կայսր. և իբրև ընտրեցին, առժամայն ազդեցին պապին. պապն կայսրացոյց զնա հանդիսական գրով, և հաստատեաց անդ. թէպէտ և զկնի սոցին բա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան